մայն անհասկանալի: Լատինական (կաթոլիկ) ձգտումը ստեղծել է նոյնանման, բանաւոր եւ համաշխարհային մի քաղաքակրթութիւն, որ բոլորովին տարբերւում է հելլէնա-արեւելեան համամշակոյթային երազից: Լատինը կոսմոպոլիտ է, համաշխարհային քաղաքացի, բայց երբեք «համայնա-մարդ»:

Տէնի «ցեղը», «միջավայրը», «ժամանակը»՝ միանգամայն սխալ, հասկանալի է սակայն լատին մտայնութեան համար: Հասկանալի է նաեւ ֆրանսական քննադատութեան մէջ ընդունուած գրական սեռերի բաժանումը եւ ուսումնասիրութիւնը: Բալզակից յետոյ ֆրանսական արձակը մի հատ հանճար չէ տրուած, մինչ 19-րդ դարու ֆրանսական վէպը մեծ եւ նշանակալից երեւոյթ է: Գերմանական եւ արեւելեան գրականութիւնները, ընդհակառակը, կարեւոր են իրենց տուած առանձին հանճարներով, մնացածը երկրորդական գրականութիւն է:

Բոման մտայնութեան մասայական արժէքների այդ շաղկապումը կազմում է նրանց ազգային պատմութիւնը, այսինքն՝ նրանց քաղաքակրթութեան դարեշրջանը: Այստեղ տաղանդը նպատակ ունի դրսեւորել բոլոր այն արժէքները, ձգտումները եւ կարելիութիւնները, որոնք արդէն գոյութիւն ունին համայնքի մէջ եւ ուղղել օգտակար մի նպատակի: Տաղանդը անհրաժեշտ եւ գործնական նպատակի է ծառայում: Նա միշտ չինարար է:

Մշակոյթային դարեշրջաններում մարդկային ոգու կարելիութիւնները արտայայտւում են առաջին անգամ անսպասելի կերպով հանճարների միջոցով: Անկարելի է նրանց ծընունդը դուշակել: Գէօտէն կամ Նիցշէն չի կարելի նախատեսել: Ամէն ինչ ոչինչից է ստեղծւում — "ex nihilo": Ահա թէ ինչու, լատին քննադատութիւնը «Աստուածային Կատակերգութեան» երրորդ մասը համարում է անյաջող, որովհետեւ «Դժոխքը» եւ «Բաւարանը» պատմականօրէն նախատեսուած են, իսկ «Արքայութիւնը», ուր Դանտէն իսկապէս հանճարեղ է, ժամանակից եւ պատմութիւնից դուրս է:

Նոյնը ազգային գաղափարի համար: Ֆրանսայում կամ Անգլիայում ազգութիւնը կապուած է պետական պատմութեան մէջ գրեթէ տեւական բնոյթ ունեցող հիմնարկութիւնների հետ: Սահմանները մնում են գրեթէ անփոփոխ, երկիրը զարգանում է որոշ մտտեսական օրէնքների եւ ազդակների ազդեցութեան տակ: Արեւելքում — Հնդկաստան, Չին, Ռուսաստան, Հայաստան — անծայր տարածութիւններ են, ուր աշխարհագրական միաւորը անդադար փոփոխութիւնների է ենթարկւում, սահմանները շարժւում են, կենտրոնը անյայտ է, ու բնական է, որ ազգային գաղափարն էլ բոլորովին տարբեր կերպով է ըմբռնւում:

Այստեղ անհատը իր գիտակցութիւնը ստեղծելու համար ստիպուած է իջնել դարերի խոր անդունդը, որոնելու համար աւանդութիւն եւ արժէք, բարոյական և հոգեկան դիմագիծ եւայլն: Այդպիսի ազգային գաղափարը լատինական համաշխարհային կաղապարի բնոյթը չի կրում, այսինքն՝ ոչ մի տուեալ ձեւ չի պարտադրում՝ ինչպէս հռոմէական կայսերապաշտութիւնը եւ արդի կաթոլիկ պապականութիւնը, այլ անորոշ սահմաններից դուրս իր որոնած աւանդութիւնները ձգտում է «համամարդկային» արժէքի վերածել ու ազգային գաղափարից վեր՝ խառնել «կենտրոնները»:

* * *

Քաղաքակրթութիւնը ամբողջ իր կամքը կենտրոնացնում է միակ նիւթական նպատակին հասնելու համար: Նա կոնակ է դարձնում երկնքին եւ աչքերը յառում է գործնական կեանքի վրայ: Կազմակերպում է օրերը, օրէնքներ է ստեղծում սահմանափակելու եւ կանոնաւորելու համար կամքերը, ոստիկանական հսկողութեան տակ առնելու համար բնազդները, չահագործելու համար ձգտումները, կենտրոնացնելու համար մկանների ուժը եւ խելքը:

Պետութիւնը ամէն ինչ է: Թագաւորը, ոստիկանը, կոմիսարը, չեկան, բանտը՝ ներքին պաշտպանութեան համար, դիւանագէտը, բանակը եւ պատերազմը՝ արտաքին թշնամիների դէմ: Անհատը դասաւորուած է, սահմանափակուած, թիւի վերածուած:

Քաղաքակրթութիւնը ձգտում է առաջ բերել մեծագոյն զօրութիւն եւ իշխանութիւն:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան